Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմազգածական համայնքներ
ոչ առևտրային իրավատերություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) License.

Դու կարող ես.

տարածել և տարածել նյութը ցանկացած միջոցով կամ կրիչով
մեջբերել կամ մշակումներ անել նյութը ստեղծելու համար հիմք

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

№ 5. «ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐԻ» ԳՐԱԳԱՐԱՆ. № 5.

ԼԵՎՈՆ ՄԵԶՐՈՒԲՅԱՆ

ՇԵԿԼԻԿ ՇԵԿՈ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԵՍ 4 ԴՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ.

ԹԻՖԼԻՍ 1926

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

№ 5. «ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐԻ» ԳՐԱԳԱՐԱՆ. № 5.

ԼԵՎՈՆ ՄԵԶՐԱԲՅԱՆ

3ռ

891.99-93
Մ-57

ԾԵԿԼԻԿ ԾԵԿՈ

ՄԸՆԿԸԿԸՆ ՊԻՑԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԸՄԲ.

Арутюнъ П. Абраамянъ

ԹԻՖԼԻՍ—1926

Գրառեպվար № 1267. Տիրաժ 1000.

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Ա. Պոլիգրաֆ-տրեստի 4-դ տպ., Պուշկ. փ. № 3։

ՇԵԿԼԻԿ ՇԵԿՈ

ՄԸՆԿԸԿԸՆ ՊԻՏԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Շեկլիկ-Շեկո	Անխնամ յերեխ.	
Գրիշո		Վարժուհի
Աշո		Բանվոր—յերիտասարդ
		Այգեպան—ծերունի
Վազիկ	Դպրոցական-ներ.	Դռնապան—յերիտասարդ
Անիկ		I. աշակերտ, 45 տարեկան, լավ հագնված
Սուրիկ		II. աշակերտ—յերիտասարդ
Ոնիկ		Աշակերտ կին—
Պետո		Սաթիկ.—աշակերտ կնոջ աղջիկը:

Փողոցի տղաները՝ Շեկոն, Գրիշոն ու Աշոն ցնցոտիների մեջ են։ Շեկոն գեղեցկադեմ խաճուճ ու շեկ մազերով տղա յե։ Նա շարունակ առանց գլխարկ է։ Գրիշոն ու Աշոն հին ու պատառոտված գլխարկներով են, բացի այդ, Գրիշոն ձեռքին փայտ ունի, կողքից ել մի պարկ կախած։ Աշոյի գոտուց կախված է մի փոքրիկ պղինձ՝ զինվորական «կատելոկ»։ Վարժուհին ձեռքին բռնած ունի մի յերկար, փայտ։

Աշակերտները կողքից կախված ունեն՝ ջրի շշեր (ֆլյաժկա), ձեռքներին ճիպոտներ ու հագնված այնպես, ինչպես, առհասարակ եքսկուրսիայի ժամանակ։ Բացի այդ, Ոնիկը թմբուկ ունի, իսկ Վազիկը մի մեծ գնդակ։

Արտաշ	*Անխնամ յերեխաների մի այլ խումբ։ Սրանք իրենց հագուստով միանգամայն տարբեր են վերև յիշված անխնամ յերեխաներից։ Բացի այդ սրանք հասակով ավելի փոքր են։ Կաղ-Ծիպուկը ման է գալիս փայտի ոգնությամբ։ Սա կաղ է ու շատ վտիտ։*
Այլոտ	
Կաղ-Ծիպուկ	
Նազիկ	*Փոքրահասակ աշակերտուհիներ։*
Զանի	

Հեղինե—*դպրոցի ծառա, բանալիները կողքից կախած։*
Կոշիկ արբող տղա—*մի վտիտ յերեխա։*
Տանտեր—*միջահասակ։*
I Աշակերտուհի
II Աշակերտուհի } *Դպրոցականներ։*

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԸ.—Քաղաքային այգի։ Բեմի խորքում խիտ ծառաստան։ Հեռվից հազիվ նշմարվում է յերկաթուղու կայարանը։ Աջ ու ձախ կողմերից գալիս են ծառուղիներ և միանում բեմի հրապարակին. բեմի ձախ կողմը մի քանի փոքրիկ թփեր, իսկ աջ կողմը փոքրիկ ցանկապատ, վորի առաջ դրված է մի յերկար նստարան։

Տեսիլ I.

ԱՅԴԵՊԱՆ. (Փոցխով հավաքում է չորացրած տերևներ) *Ե՞խ... աշուն, աշուն... թփերն էլ, կանաչներն էլ և ծառերն էլ սկսել են դեղնել ու ծերանալ, ինչպես յես։* (Փոցխին հենված արբում է ճակատի քրտինքը)։ *Ո՜... արևը բավական բարձրացել է, կեսոր է արդեն...* (Բեմի հեռեվից թմբուկի ձայն է լսվում։ Այդեպանը նայում է դեպի աջ)։ *Աշակերտներ են... Ե՞ն էլ նրանց վարժուհին... Ի՞նձ եք կանչում... Գալիս եմ, գալիս...* (Գնում է դեպի աջ, թմբկահարությունը ընդհատվում է)։

Տեսիլ II.

ԳՐԻՇՈ, ՇԵԿՈ. ԱՇՈ.—(Գալիս են ձախից).

ԳՐԻՇՈ —Յես ձեզ ասում եմ ճաշարանի դռների մոտ ինձ մի՛ք խանգարի, թե չե սկսում ենք իրար հրել ու վոչ ինձ է բան հասնում, վոչ էլ ձեզ։

ԱՇՈ. (Հրելով Գրիշոյին). *Ոհ՜ո, Գրիշո տղա, ինչ լավ ես ասում. դու ուզում ես մենակ քեզ տան, չ՝ եզ ուտեցնեն... Բա մե՞նք։*

ՇԵԿՈ.—Լավ, Գրիշո ջան. Աշո, դու յել լսիր, մեզնից մեկին մի ուտելու բան կամ փող, վոր տալիս են, մյուսները թող չ՝խանգարեն, միայն թե հետո իրար հետ կիսենք։

ԱՇՈ.—Լավ է ասում Շեկոն, այ Ալյոշը, Արտաշն ու կաղ Ծիպուկն էլ նստես են անում. նրանք էլ մեզ պես յերեքն են։

ԳՐԻՇՈ. (Բաժին հանելով բնկերներին). *Ա՛յ, այսոր մեր ու ձկան կտոր ավին... Միայն տեսնք ձեզ էլ վոր տան, դուք էլ պետք է բաժանեք հա...* (ուտում են արագ-արագ մատները լպստելով։ Բեմի հեռեվից լսվում է խմբական յերգեցողություն, վորը հետզհետե մոտենում է)։

ԱՇՈ.—Ո՜... Աշակերտներ, աշակերտներ... (մատով ցույց է տալիս դեպի աջ)

ՇԵԿՈ.—Եռ աշնան յերգն է, յես շատ եմ լսել... յես էլ գիտեմ... Ուզում եք յերգեմ (Շեկոն սկսում է յերգել, իր ձայնը միացնելով հեռվից լսվող յերգին)

ԱՇՈ.—Սուս կաց, տո սուտ պրոֆեսոր։

ԳՐԻՇՈ.—Մեկ դու յես բան հասկանում, մեկ էլ են յերգողները (Ասում ու մի քանի բուռ չոր տերև են ածում Շեկոյի գլխին)։

ԱՇՈ.—(Հեգնելով) *Տես, տես ինչպես են ծառերը դիտում, կարծես ծառ ու տերև չեն տեսել, հա... հա... հա... հա... Եռ էլ քեզ աշակերտներ...*

ԳՐԻՇՈ.—Գալիս են, այդեպանն էլ հետներն է. թաղնվենք, թե չե կըշարանա, վոր տերևները դես ու դեն շաղ ավինք, շուտ թաղնվենք... (Թաղնվում են ձախակողմյան ծառերի հետևը, միայն մերթ ընդ մերթ հանում են գլուխները ու ծամածռություններ անում)։

Տեսիլ III երրորդ

Աջից բեմ են գալիս՝ Անիկը, Վազիկը, Պետոն, Սուրիկը յեվ Ռնիկը. վերջինիս ուսից կախված է մի փոքրիկ բրբուկ: Փոքրերին ուղեկցում են վարժուհին ու այգեպանը:

ԱՅԳԵՊԱՆ. (բեմ գալով) *Ահա այստեղ է վերջանում չինարների շարքը* (Ցերեխաները զբաղված են խոսելով ու դիտելով):

ՎԱԶԻԿ. (Այգեպանին) *Այս ինչ տերևներ են։*

ԱՅԳԵՊԱՆ.—Սրանք (վերցնելով գետնից) *կաղնու տերևներ են. իսկ այն մանրերը՝ սովորական սպիտակ ակացիայի։* (Զարմացած) *Ախ՝, այս տերևները նորից շաղ են տվել, գնամ փոցխը բերեմ։* (Գնում է աջ ծառուղիով)

ՎԱՐԺՈՒՀԻ.—Ռնիկ, հապա ասա տեսնեմ, ինչու՞ յեն դեղնել ծառերի տերևները։

ԲՈԼՈՐԸ.—(Մաս ցույց տալով) *Յես... յես... յես... յես...*

ՎԱՐԺՈՒՀԻ.—Յես Ռնիկին եմ հարցնում։

ՌՆԻԿ.—Ը՞.ը՞... Մոռացա։

ԲՈԼՈՐԸ.—(Նորից մաս ցույց տալով) *Յես... յես...*

ՎԱՐԺՈՒՀԻ.—Պետո, ասա՛...

ՊԵՏՈ.—Վորովհետև աշնանը նրանք արևից չեն կարողանում առանալ իրենց անհրաժեշտ կանաչ գույները։

ԱՆԻԿ.—Բացի այդ, աշնանը արևի ջերմությունն ու ծառերի սնունդը պակասում է։

(Հանկարծ լսվում է թռչունների թռչելու մի սուլոց: Ցերեխաները ու վարժուհին վեր են նայում):

ՌՆԻԿ.—(Զարմացած) *Ինչքան են...*

ԲՈԼՈՐ ՑԵՐԵԽԱՆԵՐԸ.—(Գլուխը վեր մեկնելով) *վա՛. . վա՛...*

ԱՇՈ.—(գլուխը հանելով) *Ես տնաբանդները ասես ծիտ չեն տեսել։*

ՍՈՒՐԻԿ.—Ամբողջ յերկինքը թռչուններով է ծածկված։

ՊԵՏՈ.—(Վարժուհուն մաս ցույց տալով) *Այս թռչունները ո՞ւր են գնում։*

ՎԱՐԺՈՒՀԻ.—Ցերեխաներ, այդ մասին մենք դասարանում խոսել ենք, ո՞վ կարող է ասել, ո՞ւր են գնում. .

ՄԻ ՔԱՆԻՍԸ.—Յես... յես—

ՎԱՐԺՈՒՀԻ.—Անիկ, ասա...

ԱՆԻԿ (Մատով ցույց տալով)—*Նրանք աշնանը չվում են տաք յերկրներ, իսկ գարնանը նորից վերադառնում մեզ մոտ։*

ԳՐԻՇՈ (Գլուխը հանելով) *Համա փչեց հա՛... ասես ինքը ևս ծառերի հետ թռել ու հետ է յեկել։*

ՍՈՒՐԻԿ (Մի տերև վերցնելով ու արեվի դիմաց դիտելով) *Ինչ լավ է դեղնել այս կաղնու տերևը։*

ԱՇՈ.—Տո տերև էլ չեն տեսել, հա՛... հա՛... հա՛... հա...

ՍՈՒՐԻԿ.—Վոսկու յե նման այս տերևը։

ԳՐԻՇՈ—(Դուրս թռչելով բազմության տեղից): *Այ, ձեզ վոսկի՞ք, իսկական վոսկի՞ք:* (Ու փողոցի յերեխաները տերևներ են ածում դպրոցականների վրա ու գոռում «տուռա՞»...)

(Դպրոցականները հարձակողական դիրք են բռնում: Վարժուհին կանգնում է հակառակորդների մեջտեղը յեվ ձեռքերը տարածած թույլ չի տալիս ընդհարվել):

ՎԱՐԺՈՒՀԻ.— (Փողոցի տղաներին) *Ինչո՞ւ յեք մեզ խանգարում, լավ չեք անում...*

ԱՆԻԿ.— (Քիթը վեր ցցելով): *Ինչ վատերն են փողոցի տղաները։*

ՎԱՉԻԿ.—(Առաջ գալով, Անիկին): *Իսկ դու նրանցից լավն ես, ինչ անենք, թե աղքատ են ու անտեր։*

ՎԱՐԺՈՒՀԻ.—*Նրանք մեղավոր չեն, նրանց փողոցն է փչացնում։*

ՇԵԿՈ.—*Վարժուհի, ել չենք անի, ել չենք անի։* (Առոն ու Գրիշոն, Շեկոյին առաջ են քաշում, իսկ Շեկոն դիմադրում է նրանց: Դպրոցականները ծիծաղում են):

ԳՐԻՇՈ.—(Մաղրելով): *Վարժուհի, այ ես տղեն ձեր յերգը գիտե։*

ԱՇՈ.—*Ես Շեկոն առաջ վիվեսկեին եր կարդում, հիմա գազեթ ա կարդում։*

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ.—*Թող կարդա, թող կարդա...*

ՎԱՐԺՈՒՀԻ.—*Տեսնում եք, այս տղան ինչ ընդունակ է յեղել՝ կարդալ ել գիտե... Յերեխաներ, հիմա միասին գնանք մինչև այդու դռները, իսկ այնտեղից կ'ցրվենք մեր տները։*

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ. *Յերգելով գնանք, յերգելով գնանք։*

ՇԵԿՈ.— *Են «Աշուն»-ը յերգեցեք, յես ել կ'յերգեմ,* (Իսկ Առոն ու Գրիշոն ծիծաղում են Շեկոյի վրա):

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ.— *Յերգենք, յերգենք...*

ՈՒԻԿ.—*Դե քայլ—մարշ։*

(Բոլորի առաջից գնում է թմբկահար Ունիկը, նրա հետևից մյուս բնկերները—շարված քսան հոգակի: Նրանք բայլում են համաչափ ու միակերպ: Շեկոն գնում է աշակերտների հետևից: Նա բայլում է շատ յուրջ ու յերգում նրանց հետ, իսկ Առոն ու Գրիշոն Շեկոյի հետևից—անկանոն բայլերով ծաղր ու կատակով: Բոլորը անցնում են աջ ծառուղիով: Առոն ու Գրիշոն կանգնում են բեմի սահմանի վրա):

ԳՐԻՇՈ.—(Գոռում է Շեկոյի հետևից): *Շեկո, չե՞ս գալիս վագզալ գնանք՝ բան ճարելու։*

Տեսիլ IV՝ Առո, Գրիշո

ԱՇՈ.—(Հեռուն ցույց տալով): *Շեկոյին՝, Շեկոյին՝,... յերգում ա, յերգում... հա... հա... հա... հաա...*

ԳՐԻՇՈ.—*Արի մենք գնանք վագզալ, շուտով գոյեղդը կ'գա։*

ԱՇՈ.—*Բա Շեկոն, ախար նա յել է քաղցած...*

ԳՐԻՇՈ.—*Թող նա գնա նրանց հետ, կարելի յե նրանք մեր Շեկլիկին մի քիչ չորացած վոսկե տերևներ ուտացնեն... հա... հա... հա... հա...*

(Գնում են ձախ)

Տեսիլ V.

ՇԵԿՈՒՆ.—Աջ ծառուղուց, շվշվացնելով, ուրախ-ուրախ, բեմ է վազում:

ՇԵԿՈ.—*Գրիշո՞... Աշո՞... Նրանք գնացել են։ Ինչ լավ կին է յեղել այդ վարժուհին, ինձ շարունակ «Ջանիկ» եր ասում։ Ինձ դեռ վոչ վոք այդպես քաղցր «Ջանիկ» չի ասել։ Աշակերտները իմ անունը շատ հավանեցին ու իրար ասում էին. «Տես, տես Շեկլիկ—Շիկոն մեր յերգն է յերգում»։ Գրիշոն, Աշոն ինձ վրա ծիծաղում են, համա յես ամենամեծ վիվեսկեին անգիր գիտեմ։*

Վարժուհին ասաց. «Կարդա, Ջանիկա»։ Բա գազեթա հե... հէ՛յ... (Շեկոն ծոցից հանում է մի հին հնոտված լրագրի կտոր, մի քանի անգամ հարթում է ծնկան վրա ու սկսում է ծամիր ու տատ տատ կարդալ։ Նա կարդալիս շարունակ ծոծրակը կամ գլուխն է քորում)։ Բ՞... ա... թ՞... ռ... ՛ժ... Բաթում (Այդ միջոցին նրա վոտքին դիպչում է մի մեծ գնդակ)։

Տեսիլ VI Շեկո յեվ Վազիկ։

(Շեկոն վեր է թռչում... Գնդակի հետևից մոտ է վազում Վազիկը)։

ՇԵԿՈ.—Վա... ես ինչ է... Վորտեղից...

ՎԱԶԻԿ.—(Հեգնելով)։ Շեկլիկ- Շիկո, քիչ կարդա, աչքերդ կ՝ցավեն...

ՇԵԿՈ.—Ինչ ես ուզում, թող կարդամ թե չէ...

ՎԱԶԻԿ—Ինչ ես կարդում, մի կեղտոտ լրագրի կտոր ձեռքդ ես առել, թե կարդում եմ։

ՇԵԿՈ.—Բա ի՞նչ անեմ. գիրք տուր, գիրք կարդամ։

ՎԱԶԻԿ.—Ուրեմն դու կատակ չես անում, գիրք ել ես ուզում... Շեկո, իսկ մեր յերգը քեզ ով սովորեցրեց։

ՇԵԿՈ.—Քեզ ինչ, դու ով ես, վոր հարցնում ես։

ՎԱԶԻԿ. (Ձեռքը կրծքին դնելով)։ Ցե՛ս... յես Վազիկն եմ, հո տեսնում ես, Վազիկն եմ...

ՇԵԿՈ.—Ա՛յ, Վազիկ, բան ունե՞ս ուտելու, տուր, քաղցած եմ, ախար սոված փորով ինչ խոսամ...

ՎԱԶԻԿ.—(տալով)։ Այ՛, իմ այսորվա եքսկուրսիայի նախաճաշը, դե ասա. ով սովորեցրեց (տալիս է)։

ՇԻԿՈ.—(Ուտելով)։ Այդ աշնան յերգը վաղուց եմ լսել, բայց չ՝գիտեմ յերը։ Շատ փոքր եյի, այն ժամանակ կարծեմ ծնողներ ել ունեյի ու լավ խշ-խշան շորեր ել։ Չ՝գիտեմ, վորտեղ եր մեր տունը, բայց գիտեմ, վոր մեր տանն եմ լսել այդ յերգը։

ՎԱԶԻԿ.—(Կարեկցելով ձեռքը դնում է նրա ուսին)։ Բա ձեր տունը, հայրդ, մայրդ...

ՇԵԿՈ.—Ինչ գիտեմ, ախպեր... Մի որ ել տեսնեմ, առանց ծնողների,

վագոնի մեջ նստած գնում եմ... Հետո, մի առավոտ էլ աչքերս բաց արի, ինչ տեսնեմ, յես սարում, չոլում նստած, իմ չորս կողմը հրացան են գցում... Շատ ժողովուրդ կար, բոլորն էլ թրով ու հրացանով։ Ետտեղ իրար սպանում էյին... Ասես պատերազմ էր։ Հետո էլի պոյեզդ, էլի չքը... չքը... չքը... չքը...

ՎԱՉԻԿ.—Հետո... հետո. .

ՇԵԿՈ.—Պոյեզդը մի քաղաքում կանգնեց, էլ չ'գնաց. ետ քաղաքում ամեն պատի տակ մարդիկ պառկած լաց էյին լինում. «քաղցած եմ, մեռնում եմ»։ Հետո էլի պոյեզդ։ Ու ես քանի ամառ ու ձմեռ ա, ինչ ետտեղ եմ։ Հո լսեցիր... Դե, թող կարդամ (Ու Շեկոն պատրաստվում է շարունակել իր ընթերցանությունը)։

ՎԱՉԻԿ.—Շեկո, ուզում ես քեզ մի լավ գիրք տամ։

ՇԵԿՈ.—Դե տուր, շուտ...

ՎԱՉԻԿ.—Արի քիչ ֆուդբոլ խաղանք, հետո յես քեզ մի պատկերազարդ գիրք կ'տամ։

ՇԵԿՈ.—(Լրագրի կտորը ծոցը դնելով)։ *Խաղանք։*

ՎԱՉԻԿ —Շեկո, դու ֆուդբոլ լավ ես խփում։

ՇԵԿՈ.—Ընկերներս շատ անգամ ինձ հետ չեն ուզում խաղալ, գիտեն վոր կհաղթեմ։ Այ, խաղանք կ'տեսնես։

ՎԱՉԻԿ.—(Գնդակը Շեկոյին տալով) *Դե, դու գնա ու են չինարի տակից գցիր։*

Տեսիլ VII. Նույն։

Աջ ծառուղուց բեմ են վազում Սուրիկն ու Պետիկը։

ՍՈՒՐԻԿ.—Հե... Հեյ, Վազիկ, ետ ուր հետ ես խաղում։

ՊԵՏԻԿ.—Վազիկ, մենք էլ ենք խաղում, գնդակն են ուր ես տվել։

ՎԱՉԻԿ.—Շեկոյին, են Շեկոն, վոր այսոր մեզ հետ յերգում էր։

ՍՈՒՐԵՆ.—Փողոցային տղայի հետ ես խաղում, Նա ինչ գիտի, վոր ..

ՊԵՏԻԿ.—Չե, Նա լավ տղա յե յերևում, յես նրան ֆուդբոլ խփելիս էլ եմ տեսել, շատ լավ է խաղում։

ՎԱՉԻԿ.—Դե խոսելու ժամանակ չկ, թե խաղում եք, խաղացեք։

ՊԵՏՈ.—Լավ, Վազիկ, յես կ'գնամ Շեկոյի մոտ (վազում է ձախ ծառուղիով)։

ՍՈՒՐԵՆ.—Պետո, Շեկո, դե գնդակը շուտ (Սուրիկն ու Վազիկը անհամբեր ոտում են ձեռքերը, սպասում են գնդակին)։

ՊԵՏՈ —(Բեմի հետեվից)։ *Հե...հեյ... գնդակը յեկավ։*

ՎԱՉԻԿ.—(Շատ արագ ու վեր նայելով) *Վայ...Վայ... գնդակը ուր գնաց։* (Ու ուզում է վազել գնդակի ուղղությամբ դեպի աջ ծառուղին, հանկարծ լսվում է ապակիների ջարդվելու ձայն)։

ՊԵՏՈ.—(Բեմ վազելով)։ *Այգեպանի լուսամուտի ապակիները ջարդեցինք։*

ՎԱՉԻԿ.—(Ծնկները ծեծելով) *Վայ... տունս քանդվեց։*

ԲՈԼՈՐԸ.—Փախչենք, փախչենք (Սուրիկն ու Պետիկը վազում են դեպի աջ)։

Տեսիլ VIII

Վազիկ, Շեկո։

ՇԵԿՈ.—(Վազիկի բեվը բռնելով)։ *Ո՞ւր ես փախչում... Գիրքս մոռացար, տուր...*

ՎԱԶԻԿ.—(շտապելով) Ճաշից հետո արի այստեղ, յես քեզ համար մի պատկերազարդ գիրք կ՚բերեմ ու ելի կբխաղանք։

ՇԵԿՈ.—Բա յե՞րբ կարդանք (շտապով վազվզում են բեմի վրա)։

ՎԱԶԻԿ.—Ամեն որ խաղից հետո, վաղն էլ արի

ՇԵԿՈ.—(Հեռուն դիտելով)։ Ա՜յ.. այդեպանը։

ՎԱԶԻԿ.—(Շտապով) Փախչենք, փախչենք... Արձանի մոտից, փայտը ձեռքին դեպի մեզ է վազում։ (Փախչում են դեպի ձախ)։

Տեսիլ IX

Աջից ներս է վազում այգեպանը ու շարտում է փայտը տղաների հետեվից։

ԱՅԳԵՊԱՆ.—Հի, հեյ... Այդ դուք եյիք հա... Ափսոս, չ՚դիպավ։

ՎԱՐԱԴՈՒՑՐ

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄ.—Քաղաքի մի հետ ընկած փողոց։ Բեմի խորքում մի յերկար նստարան։ Մայթի յեզերքին յերևում է մի ելեքտրական լապտեր։ Բ. գործ. մեջ դպրոցականները հանդես են գալիս դասագրքերը ձեռքին։

Տեսիլ I

Նստարանի վրա իրար մոտ կծկված պառկած են՝ Գրիշոն, Աշոն ու Շեկոն։

ԳՐԻՇՈ.—(Աչքերը տրտելով)։ Աշո, վերկաց, տես, լուսանում է։

ԱՇՈ.—(Մեկնվելով)։ Թող քիչ էլ քնեմ, դեռ չի լուսացել (լսվում է գործարանների շչակների սուլոցը)։

ԳՐԻՇՈ..—Այ տղա, չես լսում գործարանների շչակների ձայնը։

ԱՇՈ.—Դե գլուխ մի տանի յե՞... Քաղցածությունից փորս մեջքիցս է կպել։ Դու յել մի կողմից՝ վերկաց հա, վեր կաց։

ԳՐԻՇՈ.—(Մոտենալով Աշոյի ականջին)։ Տո, շշշ, յերեկվա ֆոկուսնիկությունը եսպես շուտ մոռացար...

ԱՇՈ.—(Աշխուժությամբ տեղից վեր թռչելով) Հա, մոռացել եյի... Դե տուր դիմակը... Այսոր յես կ՚լինեմ արջուկը, իսկ դու տերը (Ու Գրիշոյի գոտուց քանդելով դիմակը, դնում է իր դեմքին) Գրիշո, սազում ե՞։

ԳՐԻՇՈ.—(Ծիծաղելով) Արջուկի դիմակով, իսկական կապիկի նման ես։

ԱՇՈ.—Այ, Շեկոյին կ՚սազի. Նա արջի պես թմփլիկ է, թող եսոր էլ նա լինի արջուկը։

ԳՐԻՇՈ.—(Հեգնելով) Թող ընի՞... Դա հո գիտես սուտ պրոֆեսոր ա, պատռտած գաղեթից ձեռք քաշեց, հիմի յել գիրք ա կարդում։

ԱՇՈ.—Ի՞նչ ես ծաղրում, իրիկունը (ցույց տալով ելեֆտրական լապտերը) ես ճրագի տակ ջրի պես եր կարդում։

ԳՐԻՇՈ.—Ցերկու շաբաթ է, Շեկոն էլ մեզ հետ չի լինում։

ԱՇՈ.—Ամեն որ Վազիկի ու նրա ընկերների հետ է։

ԳՐԻՇՈ.—Նրանք Շեկոյին շատ են սիրում. ամեն որ խաղից հետո, գիր են կարդացնում, հաց են տալիս ու ճամբա գցում։

ԱՇՈ. —(Ծածուկ հանում է Շեկոյի ծոցից հրա գիրքն ու սկսում է դիտել նկարները): *Գրիշո, տեսնես ես գայլը ինչ է ուզում ես յերեխից, կարծես հետը խոսում է։*

ԳՐԻՇՈ.—(Գիրքը իր ձեռքն է առնում ու բացում): *Ամեն բան կա մեջը՝ ել մարդ, ել տուն, ես ել հազար ու մի ծաղիկ։ Դե վոր ասում են թե գիրքը լավ բան ա, հո սուտ չի, համա մարդ լեզուն պետք է իմանա։*

ԱՇՈ.—(Գիրքը տեղն է դնում):

ԱՇՈ. —(Շեկոյին հռչելով): *Այ, Շեկլիկ, սուտ պրոֆեսոր, դե վերկաց, գիրքդ կարդա...*

ՇԵԿՈ.— (Ձեռքերը տարածելով): *Ո՞ւֆ... ողբ. մի բան չունեք ուտելու... փորս վեց-վեց ա անում։*

ԱՇՈ.—*Հը... յերեկ քո ընկերները քեզ ուտելու բան չտվին։*

ՇԵԿՈ.—*Յերեկ նրանք մոռացան, յես ել ամաչեցի... չուզեցի...*

ԳՐԻՇՈ.—*Եռ մեր գործը չի, մենք յերես վեր բերենք, ֆոկուսնիկություն անենք ու քեզ ուտացնենք։*

ԱՇՈ.—*Գիշերները արի մեր տուն, մեր տունը շատ մեծ ա։* (Յույց է տալիս հատարանին ու փողոցը): *Գիտեմ մենակ վախում ես, բայց ուտել, խմել...* (Ձեռքով բացատրական նշան է անում):

ՇԵԿՈ.—*Տե՛, լա գուք նամուս չունեք, յերեկ առավոտից բան չեմ դրել բերանս* (փորը բռնելով), *վա՛յ, — մի բան արեք, թե չե կ'մեռնեմ, ուֆ, շատ սոված եմ։*

ԱՇՈ.—*Ե՞... անխելք, չես իմանում, վոր մենք քեզնից ավելի յենք քաղցած։*

ԳՐԻՇՈ.—(Զարմացած, պարկի խորից հացի կտոր է հանում): *Վա՛... ես հացը վերաբերից լուս ընկավ.*

ԱՇՈ.—*Մոռացար... Յերեկ արջի պես խաղալիս ինն կոպեկ չաշխա-*

տեղիներ ու փոնի հաց չառնեք։ (Շեկոն հացը տեսնելուն պես, նստած տեղը սկսում է ուրախ-ուրախ թռչկոտել)։ *Սա հենց են հացիցն է էլի...*

ԳՐԻՇՈ.—(Հացը կիսելով)։ *Տներից ու ճաշարաններից միշտ չոր հաց են տալիս...*

ՇԵԿՈ.—Ո՞վ է գժվել մեզպեսներին փափուկ հաց տա...

ԳՐԻՇՈ.—Ո՜ւֆ... ո՜ւֆ... ո՜ւֆ... այս ապտեկի *ապիտակ ու փափուկ բամբակ ըլի։* (Մի կտորը մեկնում է Շեկոյին, Շեկոն մոտ է վազում, բայց Գրիշոն խաբելով ձեռքը հետ է քաշում ու տալիս է Աշոյին)։ *Վերկաց, Աշո ջան...*

ՇԵԿՈ.—Բա յե՞ս, ախար քաղցած եմ է... Մի քիչ հաց տվեք, յես էլ ձեզ հետ կ'աշխատեմ։

ԳՐԻՇՈ—(Ձեռքը Շեկոյի ուսին խփելով)։ *Լավ մեղք ես... Միայն թե այսոր դու կ'լինես արջուկը։* (Իր հացից մի քիչ կտրում, տալիս է Շեկոյին) *Աշո, դե քիչ էլ դու տուր։* (Շեկոն ագահաբար կլանում է հացն ու դնում է դիմակը)։

Տեսարան II Դրաման

Աջ կողմից ձեռնափայտը ձեռքին մոտենում է դռնապանը։

ԴՌՆԱՊԱՆ.—Հը ինչ է պատահել... եսպես վաղ ինչո՞ւ յեք հավաքվել, ինչ եք շինում։

ՇԵԿՈ.—(Ուրախ)։ *Ֆոկուսնիկություն ենք անում, քեռի ջան,* (դիմակը յերեսն է քաշում)։ *Այ, տես...*

ԳՐԻՇՈ.—Տղեք, իսկապես, քանի դեռ վաղ է ու փողոցներում մարդ չ'կա, արի մեկ անգամ փորձենք։

ԱՇՈ.—Տեսնենք Շեկլիկը վոնց արջուկ է։ (Դռնապանը նստում է նստարանին, Գրիշոն Շեկոյի գոտուց կապում է մի յերկար պարան, վերի մի ծայրը իր ձեռքն է առնում։ Գրիշոն մյուս ձեռքին բռնած ունի մի նիպաս, վերը յերգի ժամանակ զարկում է գետնին նամաչափի հարվածներով։ Պարի ժամանակ Աշոն իր «կոստյոլի» վրա դափ է խփում, իսկ Շեկոն պարում է)։

ԳՐԻՇՈ.—(Առանց յերգելու ասում է)։

Շեկլիկ Շեկո, շուռ արի,
Մեջքդ ուղղու, ծառս արի,
Շեկլիկ Շեկո, շուռ արի՝
Արջուկի պես պար արի։

(Սրանից հետո Գրիշոն ու Աշոն բերանով ածում են պարի յեղանակ, իսկ Շեկոն սկսում է պարել)։

Տեսարան III Դրաման

Պարի միջոցին աջ փողոցից խաղացողներին մոտենում են մի *45* տարեկան տղամարդ ու մի *30* տարեկան յերիտասարդ, իսկ ձախից—մի կին՝ աղջիկ ձեռքը բռնած։

ԿԻՆ.—(Նայելով մի քանի սեվ դրամ)։ *Լավ արջուկ է չե՞, Սաթիկ ջան, տես վոնց է պարում։* (Շեկոն կատակով վախեցնում է Սոֆիկին)։

ՍԱԹԻԿ.—Մայրիկ, յես արջից վախենում եմ, գնանք, գնանք։(Գնում են աջ)։

Տեսարան IV Դրաման առանց կնոջ ու յերեխայի

ԳՐԻՇՈ.—(Ընդհատելով պարը ասում է)։ *Դե, արջուկ ջան, սև յերես,*

(փայտը տալիս է արջուկին ու իր ձեռքը տանում հասակավոր անցորդի գրպանը այնպես, որ թատրոնի հանդիսականները լավ տեսնեն):

Փորդ ուզբու գաղ ու կես,
Գնա արի ազի պես։

(Ու նորից սկսվում է պարի յեղանակն ու պարը):

ԴՌՆԱՊԱՆ.—(Վերկենալով ու ժողովրդի կողմը): *Իսկական թատրոն ա, իսկական թատրոն։* (Ու ծիծաղելով անցնում է բեմից ձախ)։

Տեսարան V Նրանք առանց դանապանի

Պարը շարունակվում է, Գրիշոն ավելի խորն է տանում ձեռքը:

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—(Բռնելով Գրիշոյի ձեռքը, յերկու անգամ ապտակում է նրան): *Ախ, դուք գողեր, ավազակներ, իմ գրպանում ինչ գործ ունեք...* (Խաղը ընդհատվում է, Շեկոն ու Աշոն ուզում են փախչել, բայց հետ են գալիս):

ԳՐԻՇՈ.—(Լացի ձայնով): *Ինչ ես խփում, յես քեզ ինչ արի...*

ԱՇՈ.—(Կոպիտ): *Ե՛... թող մեր ընկերոջը, թե չե՛...*

ՇԵԿՈ.—*Թող մեր ընկերոջը, թե չե՛...*

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—*Իսկույն կ'կանչեմ, բոլորիդ կ'բռնեն։*

ԱՇՈ.—(Շեկոյին): *Փախչենք, կ'բռնեն...* (Փախչում են):

ԳՐԻՇՈ.—*Թո՛ղ... Թո՛ղ... Թո՛ղ... Ինչ ես խփում...*

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—(II-րդ անցորդին): *Բռնեցեք, փախան... Ավազակնե՛ր...* (II-րդ անցորդը բնկնում է Աշոյի ու Շեկոյի հետեվից):

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—(Նորից ապտակելով): *Դե արի գնանք...*

ԳՐԻՇՈ.—*Վա՛յ... վա՛յ...* (Ցերեսը բռնելով): *Վա՛յ մեռա՛... Թո՛ղ... Թո՛ղ...* (Գրիշոն հանկարծ ազատվում ու փախչում է բեմի աջ անկյունը, իսկ Ի-ին անցորդը նրա հետեվից, յեվ յերկուսը միասին դուրս են վազում բեմի ձախ կողմով):

Տեսարան VI

Աջից, գրքերը ձեռքներին, յերեվում եմ՝ Վազիկը, Սուրիկն ու Անիկը:

ՍՈՒՐԻԿ.—*Վազիկ, տես, վազվզում են, ինչ է պատահել։*

ՎԱԶԻԿ.—*Շեկոյի ընկերն է, յերևի բան է գողացել...*

ԱՆԻԿ. -*Մեղք է, գնանք, խնդրենք...*

ՎԱԶԻԿ.—*Սուրեն տես, մեր Շեկոյին էլ են բռնել, վազենք։* (Վազիկը, Սուրիկն ու Անիկը դուրս են վազում ձախ փողոցով):

Տեսարան VII Ի-ին անցորդն ու Գրիշոն գալիս են ձախից

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—(Գրիշոյի բեվից բռնած): *Ինձնից ո՞ւր կ'փախչես...*

ԳՐԻՇՈ.—(Աղերսալով): *Ել չեմ անի, քեռի ջան, ել չեմ անի...*

Ի-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—*Չեմ թողնի, ինչի՞ յես գողություն անում, դե արի գնանք...*

ԳՐԻՇՈ.—(Ծնկաչոք): *Թող, քեռի ջան, թող, սխալվեցի, քեռի ջան։*

Տեսարան VIII Նրանք

Ձախ փողոցից բարձր խոսելով, բեմ են գալիս՝ II-րդ անց., Անիկը, Սուրիկը յեվ Վազիկը:

ՎԱԶԻԿ.—(II-րդ անցորդին): *Ցես ձեզ ասում եմ իմ գիրքն է, յես եմ տվել։*

II-ՐԴ ԱՆՑՈՐԴ.—(I-ին անցորդին ցույց տալով Շեկոյի գիրքը): *Տեսեք, սա յել ես նոր գիրքն է գողացել։*

I-ՐՆ ԱՆՑՈՐԴ.—*Դրան ել բերեք...*

ՎԱՉԻԿ և ՍՈՒՐԻԿ.—(Հարձակվելով II-րդ անցորդի վրա): *Թող Շեկոյին, թող...*

I-ՐՆ և II-ՐԴ ԱՆՑՈՐԴ.—*Չի կարելի, չի կարելի...*

(Սուրիկն ու Վազիկը քաշքշում են II-րդ անցորդին: I-ին անցորդը ուզում է բաժանել կռվողներին, Դրիտոն ոգևորվելով հանգամանքից, ազատվում ու փախչում է դեպի ձախ):

Տեսարան IX Նրանք առանց Դրիտոյի

ԱՆԻԿ.—(Անհանգիստ վազվզելով բեմի առաջի մասում): *Ոգնեցեք... ոգնեցեք... վա՛յ... վա՛յ... ոգնեցեք... ոգնեցեք...*

(Աջ փողոցից մոտ է վազում մի բանվոր, իսկ ձախից դռնապանը ու միաժամանակ բաժանում են կռվողներին):

ԴՌՆԱՊԱՆ.—*Ի՞նչ է պատահել։*

ԲԱՆՎՈՐ.—*Ամոթ չե՞, են ել դպրոցի աշակերտներ. փողոցում կռիվ եք սարքել։* (Աշակերտները ու Շեկոն անցնում են բանվորի մոտ բեմի աջ անկյունը: Դպրոցականները խոսում են բանվորի հետ Շեկոյի մասին: Այդ ժամանակ դռնապանը գալիս է աջ կողմից յերևացող անցորդներին):

ԴՌՆԱՊԱՆ.—(Ձեռքերը տարածելով): *Ինդրում եմ ցրվեք, բան չկա, վերջացավ։* (Այսպես ասելով իրեն ել անցնում է բեմից ձախ: Միաժամանակ բեմից հեռանում են I-ին յեվ II-րդ անցորդները: Հանկարծ բեմ են գալիս Աշոն ու Դրիտոն ու ծածուկ, հիր ցույց տալով, նրանց ուղեկցում են մինչև բեմի ասմանը, հետո նստում են նստարանին ու հետևում բեմի վրա խոսողներին):

Տեսարան X.

Նրանք առանց դռնապանի յեվ անցորդների:

Դրիտոն ու Աշոն ձեռքերով շարունակ խոսում են բեմի վրա խոսողների մասին:

ԲԱՆՎՈՐ.—(Փպտալով) *Ուրեմն այս տղան* (ցույց տալով Շեկոյի գլուխը) *յերկու շաբաթվա ընթացքում կարդալ գրել սովորեց...*

ՎԱՉԻԿ.—(Բանալով Շեկոյի գիրքը) *Տեսեք, արդեն հասել ենք մինչև «Աղվեսն ու աքաղաղը»։*

ԲԱՆՎՈՐ.—(Ինքն իրեն) *Այսպիսիներին պետք է ազատել փողոցից, թեպետ մանկատներում տեղ չկա, բայց գոնե սրան...* (Դրպանից հանում է բլոկնոտն ու գրում) *Փոքրիկ, անունդ ինչ է.*

ՇԵԿՈ.—*Շեկո*

ԲԱՆՎՈՐ.—*Իսկ ազգդ* (Շեկոն ուսերով բացասական նշան է անում):

ԱՆԻԿ.—*Խեղճը ինքն ել չգիտե...*

ՍՈՒՐԵՆ.—*Դրան ընկերները Շեկլիկ Շեկո յեն կանչում։*

ԲԱՆՎՈՐ.—(Միածայնով *Ճիշտ վոր շեկլիկ է ու խճուճիկ։ Ծնողներ... Հայր, մայր ունե՞ս...*

ՇԵԿՈ.—*Ծնողներիս չեմ ել հիշում* (Բանվորը գրում է)։

ԲԱՆՎՈՐ.—*Լավ, բա վո՞ր տեղ ես ապրում։*

ՇԵԿՈ.—*Վազզալում, կամուրջների տակ, քաղաքային այգում, իսկ ցուրտ*

յեղանակներին (Կնկվելով) *խանութների փեղկերի հետևը կամ ջարդված վագոններում։*

ՎԱՉԻԿ.—(Բանվորին) *Ուրեմն չեք մոռանա մեր Շեկոյին, խնդրում եմ...*

ԱՆԻԿ.—*Մենք բոլորս էլ խնդրում ենք մի բան անել, աշխատեք...*

ԲԱՆՎՈՐ.—*Շատ գեղեցիկ, դուք էլ շարունակեցեք առաջվա պես, իսկ յես կաշխատեմ...*

(Բաղմի ժամացույցը զարկում է մեկ անգամ)

ԱՆԻԿ.—*Վասիկ, Սուրիկ, տես կեսը խփեց դասից չուշանանք։*

ԲԱՆՎՈՐ.—*Ուրեմն դուք շարունակեք, յես միշտ պատրաստ եմ* (Դպրոցականները իրենց նախանձից բաժին են տալիս Շեկոյին)—

ՎԱՉԻԿ.—(Շեկոյին) *Յերեկոյան, քաղաքային այգում... Չմոռանաս...*

ԲԱՆՎՈՐ.—(Ցույցով Շեկոյին դրամ է տալիս) *Ելի կ՚տեսնվենք.*

(Բոլորն գնում են աջ փողոցով)։

Տեսել XI

Շեկո, Աշո, Գրիշո.

ՇԵԿՈ.—(Նայում է ձեռքի հացին ու դրամին) *Ջան... Ջան...* (Գրիշոն ու Աշոն մոտ են վազում)։

ԳՐԻՇՈ.—*Դե գնանք, ուտենք* (Շեկոյին քաշում են դեպի նստարան, նստում են ու սկսում ուտել)։

ԳՐԻՇՈ. (Վերկենալով, ժողովրդի կողմը) *Յես մտնեմ նեղ ու մութ գրպանները, ծեծ ուտեմ, հացն ու փողը Շեկոյին տան, ես տեսակ էլ արդարությունն...*

ԱՇՈ.—*Ետ էլ բախտ է էլի* (Ուտում է մատները լպստելով)։

ՇԵԿՈ.—*Տեսեք, ինձ շուտ մանկատուն էլ կ՚տանեն։*

ԳՐԻՇՈ.—*Գիշեր, ցերեկ փողոց չեն թողնի, տո շաշ... Թեպետ իմ այսորվա կերած ապտակները մանկատնից էլ վատ էին, բայց...*

ՇԵԿՈ.—*Այնտեղից կինո ու թատրոն էլ կ՚տանեն*

ԱՇՈ.—*Ես էլ ձուկ ե՞, ինչ է* (ուտում է մատները լպստելով), *բայց շատ համով է։*

ԳՐԻՇՈ.—(Հանկարծ վերջանալով) *Տղեք, Շեկո, Աշո շուտ տեսեք շուկայից վորքան մարդ է գալիս այս կողմը... Պարելով գնանք...*

ԱՇՈ.—*Այ, իսկական փողի տեղ։*

(Անմիջապես տեղից վեր են թռչում ու կազմակերպում են արջի նույն խաղը։

Այս անգամ Գրիշոն խոսքեր չի ասում, այլ բերանով ածում է խաղի յեղանակ։

Մի անգամ պարով շրջում են բեմի վրա ու անցնում դեպի աջ փողոց)։

ՎԱՐԱԳՈՒՑԸ.

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԸ—*Մի ցածրիկ ու խոնավ նկուղ. պատերի ծեփը տեղ-տեղ թափված։ Դիմացի պատի վերին մասում՝ մի փոքրիկ լուսամուտ, յերկաթե ճաղերով։ Նկուղի աջ ու ձախ կողմը՝ հասարակ տախտակե լայն դոներ։ Աջ պատի*

տակ մի ջարդված թախտ։ Հատակի վրա մի քանի աղյուսից շինված է կլոր ոջաղ։

Տեսիլ I.

Ոջաղի առաջ նստած են Արտաշն ու Ալյոսը, բուդր են խաղում, իսկ Կաղ-Ծիպուկը, փայտին հենվելով, մեկ՝ մեկի կողմն է անցնում, մեկ՝ մյուսի ու նեռեվում խաղի ընթացքին։ Սրանք մոտ են մեզ ծանոթ անխնա յեռեխ.

ԱՐՏԱՇ — Դե, գցիր տասանոցը, ինչ ես պահում։

ԱԼՅՈՇ — Հ՛ը, դե տաք (գցում է տասանոցը)։

ԱՐՏԱՇ — Ալյոշ, դու լսել ես, վոր Շեկոյին մանկատուն են տարել։ Նրա ընկերները՝ Աշոն ու Գրիշոն մենակ են մնացել։

ԱԼՅՈՇ — Գիտեմ, գիտեմ, բայց չե վոր Աշոն ու Գրիշոն Շեկոյին ծաղրում էին ու նրա կարդալու վրա ծիծաղում։

ԾԻՊՈՒԿ — Տղերք, տեսաք այսոր Աշոյին, ցեխի մեջ ընկած քաղցած մեռնում եր։ Գրիշոն նրա թևից բռնած հաղիվ եր քաշ տալիս։

ԱՐՏԱՇ — Յեթե այս գիշեր դուրսը մնան, կ՛սառչեն, կ՛մեռնեն։

ԾԻՊՈՒԿ — Կփետանան, սառուց կկտրեն։

ԱԼՅՈՇ — Կարծում եք մենք նրանցից լավ հալումն կ՛լինենք, յեթե այստեղից մեզ դուրս անեն։

ԱՐՏԱՇ — Վայն եկել, մեզ տարել ա։

ԱԼՅՈՇ — Դե լավ, զանվա մեր տանի, Արտաշ տղա, թուղթդ գցիր տեսնեմ...

ԱՐՏԱՇ — (Գցելով)։ Այ, տանելն այսպես կ՛լինի, դե մի շայիս դեսը քաշիր։

ԾԻՊՈՒԿ — Ոհո... Արտաշ, դու կատակ չես անում մ՛այ...

ԱԼՅՈՇ — Վոչինչ, իմ փողերը շուտ հետ կ՛գան, (Արտաշի մեջքից քաշելով), վերջը կ՛տեսնես, թե Արտաշի ուսերի մեջքն ել չ՛տանեմ...

ԾԻՊՈՒԿ — (Ծիծաղելով)։ Արտաշ տեսաք, Ալյոշը ինչ ասեց...

ԱՐՏԱՇ — Տո՛, կաղ-Ծիպուկ, դու շատ մի խոսիր։ (Ծիպուկին դրամ է բպրտում)։ Առ ես մի կոպեկը քեզ, գնա փայտ ճարի, մատներս փետացան... Են ցանկապատից կախված տախտակը պոկիր։ (Ծիպուկը գնում է ձախ դրսում)։ Դե, շուտ, մ՛այ կաղլիկ...

Տեսիլ II.

Արտաշ յեվ Ալյոշ։ Վերջինս սկսում է մտածել։

ԱՐՏԱՇ — Հ՛ը, ինչ ես մտածում, թուղթդ իջիր, դե շուտ...

ԱԼՅՈՇ — Ե՞խ, Արտաշ, Արտաշ, ելի հոգս հիշեցի...

ԱՐՏԱՇ — Դեռ մի թուղթդ գցիր, հետո խոսիր...

ԱԼՅՈՇ — (Թուղթը գցելով)։ Կարծես աչքիս առաջն է կանգնած՝ իր յերկար, մոխրագույն շինելով։

ԱՐՏԱՇ — Ուրեմն դու հոգդ տեսել ես...

ԱԼՅՈՇ — (Տեղից վեր կենալով)։ Պատերազմի ժամանակ հոգս յերկու շաբաթով տուն եյին թողել։ Նա մի բարձրահասակ զինվոր եր... Ինձ համար փայտից մի հրացան շինեց։ Այդ հրացանով յես ճնճղուկների հետից եյի ընկնում... Հետո հայրս գնաց ու գնաց... Մորս ել սովը տարավ... Ե՞խ... մի հիշեցնի։ (Նստում է ու, նուգված, ձեռքը նստակին խփում)։

ԱՐՏԱՇ — Ե՞հ, ինչ արած... Մեր գյուղը, վոր գրավեցին, հայրս ու մայրս

մի որում հանգան... (Ձեռքը հատակին խփելով): *Թողնենք անցածը։ Լավ թուղթ է ձեռքիս բայց...*

ԱԼՅՈՇ—Իմիր, ինչ ես վախում, տասանոցը վաղուց է գնացել... Ախ, են կաղ Ծիպուկը չ'եկավ... Ինչ ցուրտ է։

ԱՐՏԱՇ—(Բարձր): *Այ Ծիպուկ, այ կաղլիկ, մի քիչ ցախից բանից բեր է...*

Տեսիլ III.

Նրանք: Ձախ դռնից վախեցած նեռս է վազում Ծիպուկը:

ԾԻՊՈՒԿ—(Ցախը շեմքում թափելով): *Տղերք, տանտերը գալիս է...*

ԱԼՅՈՇ—Վա՛յ, ո՞ւր գնանք, էլ տեղ ու ճար չ'կա։

ԱՐՏԱՇ—(Շտապ հավաքում է խաղաթղթերը): *Ես գիշեր դուրսը կ'փետանանք։* (Իրար հրելով, դուրս են վազում ձախ դռնից):

Տեսիլ IV.

Աջ դռնից չարացած նեռս է գալիս տանտերը:

ՏԱՆՏԵՐ—Ես ինչ է, ախպեր, ոմ է այստեղ կրակ վառում... Առաջինը չի, յերկրորդը չի, ամեն յերեկո, ամեն յերեկո։ (Վոտքերով մարում է կրակը): *Գնամ են մեր մեծ կողպեքը բերեմ, դուռը մի լավ փակեմ ու վերջացավ։* (Գլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից):

Տեսիլ V.

Գրիշոն, հիվանդ Աշոյի բեվից բռնած, քաշ տալով, նեռս է բերում ձախից:

ԳՐԻՇՈ—Տո՛ տնաքանդ, մի քիչ շարժվիր է, եստեղ էլ հո բուք ու ցեխ չկա։ Տես, ինչ տեղ եմ ճարել է։ Արի, արի շորերդ չորացրու։

ԱՇՈ—(Փորը բռնած գնում է դեպի կրակը): *Վա՛յ, այստեղ կրակ էլ է յեղել... Սա մեզ համար պալատ է, պալատ։* (Ցերկուսն էլ փչում են կրակին ու ձեռքերն ու վոտքերը տաքացնում):

ԳՐԻՇՈ—Ի հարկ է, այստեղ ավելի լավ է, քան են սանդուխանների տակ։

ԱՇՈ—Ես գիշեր մեզ յերեք տեղից դուրս արին...

ԳՐԻՇՈ—Ե՞խ Աշո, Աշո, չորրորդ տեղից էլ դուրս կ'անեն։

ԱՇՈ—(Դողալով): *Գրիշո ջան, Գրիշո, մի են թախտը դեսը քաշի, քաղցածությունից վոտներս ծալվում են։*

(Գրիշոն թախտը քաշում է ոջաղի յեվ դիմացի պատի մեջտեղը, կրակին շատ մոտ: Աշոն պառկում է թախտի վրա):

ԳՐԻՇՈ—(Ուտելով): *Աշո, ես բողկի տերևներից չես ուզում, թեպետ քիչ ցեխոտ է, փողոցից եմ հավաքել, բայց...* (Ձեռքը փորին խփելով): *Ինչ անեմ, վոր դատարկ է...*

ԱՇՈ—(Լացի ձայնով): *Տա՛ր, կորցրու, դրանից է, վոր այսպես թուլացել եմ. էլ վոչ ուժ, վոչ խելք... բան չի մնացել։ Տո անխիղճ, չես հավատում, քաղցած հիվանդ եմ, քաղցած հիվանդ... Վա՛յ,—ուշքս գնում է։*

ԳՐԻՇՈ—(Ծաղր ու մտախոհ դիմում է դեպի ձախ դուռը): *Ի՞նչ անեմ, ախպեր ջան, գնամ, տեսնեմ, փորձեմ...* (Ու հանկարծ դուրս է վազում):

Տեսիլ VI.

Աշոն մենակ կողքի վրա պառկած:

ԱՇՈ—(Պարկը գլխի տակ քաշելով): *Մեր թշնամի, մեզ ուտող ձմեռը յեկավ... Ափսոս չեր ամառը։* (Մեղմ ու տխուր յերգում է):

Ամառ, ջան ամառ,
Սիրտդ բաց ամառ,
Ծոցդ լիք ամառ.
Ձեռդ առատ յերկար
Ամենքի համար։
Անտունի՝ տուն,
Անճարի՝ ճար,
Ամառ ջան, ամառ...

(Վերջացնում է յերգը)։

Շեկոն լավ պրծավ։ Մանկատանը նրան բոլորը սիրում են։ Ամեն որ տաք կերակուր, տաք ընակարան, իսկ մենք... ա՛խ...

Տեսիլ VII.

Աշո։ Ձախ դռնից շտապ ու ուրախ ներս է բնկնում Գրիշոն։

ԳՐԻՇՈ—(Ճնչտապառ ու արագ-արագ)։ Աշո ջան, պոնչիկ, տաք-տաք պոնչիկ (տալիս է Աշոյին)։

ԱՇՈ—(Տեղը նստելով)։ Գրիշո ջան, բա քե՞զ, վո՞ր տեղից։

ԳՐԻՇՈ—(Ճնչտապառ)։ Յերկուսն եր, չ՚համբերեցի, մեկը ճամբին կերա։ Կամուրջի մոտի կաթնատունը հո գի՞տես...

ԱՇՈ—(Պոնչիկը ուտելով)։ Գիտեմ, գիտեմ...

ԳՐԻՇՈ—Ժողովուրդը լիքն եր, թեյ եյին խմում, շատերն էլ նարդի եյին խփում, շրխկացնում... Ծածուկ-ծածուկ ներս մտա ու...

ԱՇՈ—(Միծաղելով)։ Հա՛փ, առաբ ու թռաբ չե՞։

ԳՐԻՇՈ—Տերը հետիցս ընկավ... Ենա տրամվայի տակն եյի ընկնում... ազատվեցի... թռա մյուս տրամվայը... (Դեմքը խոժոռելով)։ Ի՞նչ, մի պոնչիկի համար կորչելու եյի։ (Կրծքին խփելով)։ Են էլ եապես տղեն... (Վոտքը գետնին խփելով)։ Ես էլ կյանք է։

ԱՇՈ—Պոնչիկիդ արժեքն էլ մի բան չեր, մի քիչ շրթունքներս քաղցրացրեց ու քաղցս ավելի սաստկացավ։ Գրիշո ջան (փարը բռնելով), դեղ գտիր, ճար արա, վա՛յ... վա՛յ...

ԳՐԻՇՈ—Շաշ ե՞ս, ինչ է... Ցես բժիշկ ե՞մ, ի՞նչ է, ինձ դեղ ո՞վ է տվել...

ԱՇՈ—Բժիշկ չեմ ուզում, մի տաք կերակուր, մի տաք անկյուն...

ԳՐԻՇՈ—Վոր ասում եմ շաշ ես, յես քեզանից լավ որումն ե՞մ։

ԱՇՈ—Գրիշո, այ տղա ետ դուռը մի լավ փակիր, ցուրտն ինձ տարավ։ (Ձեռքը գլխին դնելով ու զարմացած)։ Ես ի՞նչ է, առաստաղից կաթում է։

(Գրիշոն ձախակողմյան կիսաբաց դուռը ավելի լայն է բանում)։

ԱՇՈ—(Ջղայնացած)։ Տո՛, անտերս, քեզ չեմ ասում փակի՞ր...

ԳՐԻՇՈ—(Դեպի փողոց)։ Շեկո ջան, Շեկո. մենք այստեղ ենք, այստե՛ղ... Գրիշոն եմ, Գրիշոն, Աշոն էլ այստեղ է։

ԱՇՈ—(Ուրախ-ուրախ ու տեղում անհանգիստ շարժումներ անելով)։ Շուտ կանչիր Շեկոյին. նա գուցե մի ճար անի։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

Տեսիլ VIII.

Գրիշոն, Աշո: Շարերի ձյունը բաի տալով, ներս է վազում Շեկոն:

ՇԵԿՈ—(Գրկախառնվելով): *Վա՛յ, տղերք Ջան, ինչպես գեղնել ու սևացել եք... Շտապում եմ, մերոնց պետք է հասնեմ, կինս յենք գնում...* (Գրիշոն շարունակ նայում է Շեկոյի շարերին ու ձեռքերը խխում):

ԳՐԻՇՈՆ—(Ժողովրդի կողմը): *Ի՞ֆ, ֆ՛ֆ, ֆ՛ֆ, ֆ՛ֆ, ի՞նչ շորեր ունի՞...*

ԱՇՈ—*Հիվանդ եմ, Շեկլիկ Ջան, ցրտից ու քաղցից. մի բան գիտես ասա, ասա...*

ԳՐԻՇՈՆ—*Դու լավ աղաուվեցիր:* (Ժողովրդի կողմը): *Ի՞նչ տաք վերարկու ունի յե՞...*

ՇԵԿՈ—(Գրպանները պտտելով): *Ահա Աշո Ջան, ես շաքարի կտորը, յերեկոյան թեյիցս է մնացել:* (Տալիս է):

ԱՇՈ—*Հա, եղ լավ է, ջուր կ՚տաքացնենք, կ՚խմենք...*

ԳՐԻՇՈՆ—*Բա յե՞ս. էլ վոչինչ չունե՞ս...*

ՇԵԿՈ—(Շտապով): *Ընթրիքի փոխարեն, ես կտոր հացը վերցրի, վոր ճամբին ուտեմ:* (Տալիս է Գրիշոյին): *Հա, մոռանում էի... Շարունակ մտաս եմ պահում, վոր ձեզ հանդիպեմ տամ:* (Մոցից հանելով): *Ես գույնզգույն թղթեր, ես էլ նկարներ... Դե մնաք բարև. էլի կ՚տեսնվենք... Մերոնք գնացին. շտապում եմ:* (Գրկախառնվում է ընկերների հետ ու դուրս թռչում):

Տեսիլ IX.

Առջ յեվ Գրիշո:

ԱՇՈ—Գրիշո ջան, են ցախը բեր, մի լավ կրակին փչի, չայ տաբացընենք, խմենք...

ԳՐԻՇՈ—Տեսաք ինչ վերարկու ուներ.. մաքուր, տաք...

ԱՇՈ—են Շեկոն, վորին ծաղրում եյինք, տեսաք այսոր մեզ շաքար ու հաց տվեց։

ԳՐԻՇՈ—(Կրակին փչելով): *Մի կատյոլդ տուր ջուր տաքացնենք։*

ԱՇՈ—(Շամարը կոծելով): *Շեկոյի գալուց հետո ասես բիչ լավ եմ։ Աբի ես նկարներն ու թղթերն ել բաժանենք։*

ԳՐԻՇՈ.—Դեռ մի կատյոլդ տուր...

(Գրիշոն վերցնում է պղինձը (կատյոլը), դրսից ջուր բերում ու կրակին դնում):

ԱՇՈ—(Վերցնելով մի նկար): *Գրիշո, տես, տես ես կատուն, ես աղջկա բաժակից կաթ է խմում, իսկ փոքրիկ աղջիկը լաց է լինում։*

ԳՐԻՇՈ—(Մոտ գալով): *Տեսնում ես աղջիկը ինչ լավ մազեր ունի... Դե աբի կիսենք։*

ԱՇՈ—Հավասար կիսենք։ Մի նկար քեզ, մի թուղթ ինձ, մի նկար ինձ, մի թուղթ քեզ։

ԳՐԻՇՈ—Ոհո, յես քեզ համար պոնչիկ բերեմ, Շեկոյի տված շաքարն ել քեզ ու ելի հավասար, ինչ լավ ես ասում։

ԱՇՈ—Լավ, լավ, մի նկար քեզ ավել կ'տամ։ (Նստում են թախտի վրա ու կիսում, շարունակ իրար հետեվից կրկնելով):

ԳՐԻՇՈ և ԱՇՈ—Ես քեզ, ես ինձ, ես քեզ, ես ինձ... (Երանի չեն նկատում, թե ինչպես, Արտաբ, Այլոսն ու Կաղ-Միպուկը հետ են սողում ու ծածուկ նստում դիմացի պատի տակ):

Տեսիլ X.

Առոյի յեվ Գրիշոյի հետեվից, անհնարության կերպով, կանգնած են Միպուկը, Այլոսն ու Արտաբը:

ԳՐԻՇՈ—Բա Շեկոն հո հիմար չեր, վոր գրքից պոկ չեր գալիս։

ԱՇՈ—Բա Նրա վերարկուն, բա գլխարկը։

ԳՐԻՇՈ - Մանկատանը Նրան այսպիսի գույնզգույն ու վոսկեզոծ թղթեր ել են տալիս, կինոն ել են տանում, ուտեցնում, խմացնում...

ԱՇՈ—Ու ամեն որ տաք կերակուր ու...

(Առոյի խոսքը կիսատ է մնում: Արտաբ՝ Գրիշոյի, իսկ Այլոսը՝ Առոյի գլխին խփում ու ծիծաղում են: Գրիշոն ու Առոն հարձակողական դիրք են բռնում):

ՄԻՊՈՒԿ.—Մի հիմար Շեկոն, դուք ել Նրա ընկերները. ինչ անենք, թե մենք մերկ ենք։

ԱՐՏԱԲ.—Ցերեկ ուզում եք վոտները կապած հավեր դառնալ, թեպետ Նրանց լավ են կերակրում, բայց...

ԱՇՈ.—(Զարացած). *Դուք վորտեղից։*

ԱԼՅՈՍ.—Իսկ դուք։

ԳՐԻՇՈ.—Մենք գտանք այս նկուղը։

ԱՐՏԱԲ.—Իսկ մենք մի ժամ առաջ այստեղ թուղթ եյինք խաղում, հետո փախանք... Դուք ել կփախչեք։

ՄԻՊՈՒԿ.—Ա՜յ խեղճեր, թե խելք ունեք շուտ արեք մի լավ տաքացեք։

Թե չե ես տների տերը, փայտը ձեռքին հա՛ւ... հա՛ւ... (Ծիպուկը շարունակում թափած փայտն ածում է կրակի վրա: Բոլորը շրջապատում են կրակն ու սկսում տաքանալ):

ԱՇՈ.—(Սարսափած): *Գրիշո ջան, եստեղից էլ, վոր դուրս անեն, լավ է գնանք ու ջուրը թափվենք։*

ԳՐԻՇՈ.— *Իսկ Շեկլիկը հիմա կինոյից տուն կգնա ու տաք անկողին կմտնի։*

ԱՇՈ.—*Բա հո մեզ պես չի։ Նրա փորը կուշտ, թշերը կարմիր...*

ԱԼՅՈՇ.—*Տեսաք նրա պատուտած գազեթը նրան ուր հասցրեց։*

ԱՇՈ.—(Վախեցած, պատուհանին նայելով): *Են ով է պատուհանից նայում։*

ԾԻՊՈՒԿ.—*Փախչենք, տանտերն է... Քիչ էլ տաքանանք, փախչենք...*

(Ու արագ-արագ ձեռքերն ու վոտքերը կրակին են մոտեցնում ու տաքանում):

ՏԱՆՏԵՐ.—(Բեմի հետեվից): *Հե՛... Հե՛յ... Ետ ովքեր եք... Հարևաններ դուրս յեկեք, մեր տունը կրակ են տալիս։*

ԲՈԼՈՐԸ.—*Շուտ փախչենք։* (Դուրս են վազում ձախ դռնից, բացի Աշոյից ու Գրիշոյից: Աշոն կայծոն է վերցնում կրակից ու ազահաբար խմում միջի ջուրը, հետո էլ շտապ կոծում):

ԳՐԻՇՈ.—*Ցես չասեցի, վոր եստեղից էլ դուրս կանեն։*

ԱՇՈ.—(Թեվանցուկ ու վոտքերը հագիվ քաշ տալով, ժողովրդի կողմը): *Մենք անտուն ենք, անտուն էլ կկորչենք։*

ՎԱՐԱԳՈՒՑԸ

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԸ.—*Դպրոցի բակ։ Բեմի խորքում շենքի ճակատը։ Մուտքի վերևը մեծ տառերով գրված է՝ «Դպրոց»։ Մուտքի յերկու կողմը, ներսից լուսավորված, պատուհաններ։ Բեմի աջ կողմը՝ ծառեր, իսկ ձախ կողմը՝ ցանկապատ։ Մուտքի ձախ կողմը դրված է մի դույլ, իսկ կողքին, պատից կախված, ջրի մի աման։*

Տեսիլ I

Դպրոցի դռնիցից լսվում է դաշնամուրի նվագ: Հեղինեն խոզանակով մաքրում է մուտքի սանդուղքը: Մոտ են վազում յերկու աշակերտուհիներ:

I *ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ.*—*Հեղինե ջան, Հեղինե, հանդեսը վաղուց են սկսել։*

II *ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ.*—(Կրկնում է) *Հանդեսը վաղուց են սկսել։*

ՀԵՂԻՆԵ.—*Վաղուց, շատ վաղուց, յերևի շուտ կվերջանա, շտապեցեք։*

(Աշակերտուհիները հերս են վազում: Քիչ հետո հրամից հետևում է Հեղինեն: Նվագը դադարում է: Հանդեսի դռնիցից լսվում է ծափահարություն):

Տեսիլ II

Ձախից գալիս են Գրիշոն ու Աշոն, վերջինիս ձեռքին—կոշիկի խոզանակ: Ներսից հետևում է կոշիկ ուբող տղան, արկղը կողքից կախած:

ԿՈՇԻԿ ՍՐԲՈՂ.—(Աշոյի հետևից վազելով ու լացի ձայնով): *Դե բավական է, ինչ եք չարչարում, ձեր պատճառով յերկու մուշտաբի կորցրի։*

ԱՇՈ.—(Խոզանակը Գրիշոյին շպրտելով): *Գրիշո, հիմա էլ դու սրբիր կոշիկները։* (Կոշիկ սրբող տղան նիհա էլ Գրիշոյի հետևիցն է ընկնում ու լաց լինում):

ԳՐԻՇՈ.—Ի՞նչ սրբեմ, ախպեր, մի վոտքիս ճղճղված կալոշ, մյուսը մեշոկով փաթաթած։ (Գրիշոն ու Աշոն ծիծաղում են)։

ԿՈՇԻԿ ՍՐԲՈՂ.—Թողեք գնամ, արդեն մութն ընկնում է, տուն եմ շտապում։

ԳՐԻՇՈ.—(Տալիս է խոզանակը ու արհամարհանքով) Գնա, վախկոտ հավի պես մորդ փեշի տակ մտիր։ (Գրիշոն ու Աշոն ծխախոտի մնացորդներ են փնտրում, ծխախոտները գետնից վերցնում, բերանն են դնում ու ժողովրդի կողմը ծամածռություններ անում։ Միևնույն ժամանակ կոշիկ սրբող տղան դիմում է դեպի ձախ)։

ԿՈՇԻԿ ՍՐԲՈՂ.—(Թևերով արցունքները սրբելով. ժողովրդի կողմը)։ Հինգ կոպեկ, հինգ կոպեկ, հայելու պես կփայլեցնեմ։ (Գնալով բեմից ձախ)։ Չքնաղ, չքնաղ...

Տեսիլ III

Աշո, Գրիշո։

ԱՇՈ.—Գրիշո, լուցքի չունե՞ս, մեկ-մեկ ծխելը լավ կլինի...

ԳՐԻՇՈ.—Համ քաղցը կմոռանայինք, համ էլ քիչ կտաքանայինք։ (Նստում են սառած ձեռքերն ու բերանի գոլորշիով տաքացնում)։ Ա՛յ տղա, բա լուցքի չկա՞... (Դահլիճից լսվում է խմբակային յերգեցողություն)։

ԳՐԻՇՈ և ԱՇՈ.—(Ծխախոտները գցելով) Հանդես է, հանդես։ (Ներսից վազելով մոտենում են դահլիճի պատուհաններին ու ուշադրությամբ լսում յերգը։ Յերգը դադարում է։ Լսվում է ծափահարություն. սրահի մի այստեղ են ծափահարում)։

ԳՐԻՇՈ.—Տես, տես Շեկոյի ընկերները, չես տեսնում վառարանի մոտ...

ԱՇՈ.—Տեսնում եմ, իսկ դու տեսնում ես բեմը ինչ լավ է զարդարված. այ են կողմի ճրագները էլ վառեցին։ (Դահլիճի լուսավորությունը ուժեղանում է)։

ԳՐԻՇՈ.—Ա՛յ տղա, են Շեկոն չի՞...

ԱՇՈ.—Շեկոն ա, ինքը Շեկոն, ի՞նչ ես զարմանում. նա ապրում է մանկատանը, իսկ այստեղ սովորում։

ԳՐԻՇՈ.—Աշո ջան, տեսնում ես, են կարմիր մազերով աղջիկը բեմից յերգում է։ (Լսվում է, թե ինչպես մի աղջիկ «սոլո» յի յերգում)։ Ցերանի յես էլ կարողանայի այդպես յերգել։ Ինձ շատ է դուր գալիս այդ յերգը։

ԱՇՈ.—են էլ մեր Շեկլիկը (զարմացած) բեմ բարձրացավ... (Պառկում)։

ԳՐԻՇՈ.—Խոսք ա ասում։ (Պառկում)։

ԱՇՈ.—Բոլորը ականջները սրած նրան են լսում... (Պառկում)։

ԳՐԻՇՈ.—Վա՜յ, վա՜յ, ծիծաղեցին։

(Բեմի հետևից լսվում է բուռն ծափահարություն)։

ԳՐԻՇՈ և ԱՇՈ.—(Ծափահարելով ու լուսամուտը ծեծելով)։ Կեցցե Շեկո ջան, կեցցե...

Տեսիլ IV

Ներսից. դուռս է վազում Հեղինեն։

ՀԵՂԻՆԵ.—(Զարացած) Ես ովքե՞ր եք...Ի՞նչ եք ուզում, հեռացեք այստեղից։

ԳՐԻՇՈ.—Մայրիկ ջան, թող մենք էլ գանք, մրսում ենք...

ՀԵՂԻՆԵ.—Սա տաքանալու տեղ չի։

ԱՇՈ և ԳՐԻՇՈ.—(Բերան ծռելով ու ծաղրելով)։ Սա տաքանալու տեղ չի, սա տաքանալու տեղ չի։ (Վազում են դեպի աջ, իսկ Հեղինեն մտնում է դահլիճ)։

Տեսիլ V

Դանդիճից դուրս են վազում Նազիկն ու Զանին յեվ մուտքի մոտ ջուր խմում:

ՆԱԶԻԿ.—Աղջի Զանի, յես ինչպե՞ս արտասանեցի։

ԶԱՆԻ.—Նազիկ Ջան, Նազիկ, իսկ յես Թիթեռի պես, այսպես (ձեվերը ցույց տալով) *լավ եյի պարում չե՞...*

ՆԱԶԻԿ.—(Վախեցած): *Զանի Ջան, են ովքեր են կուզեկուզ գալիս։*

ԶԱՆԻ.—Փողոցային տղերք են, ներս գնանք։ (Զանչ են անում յեկողներին ու շտապով ներս վազում):

Տեսիլ VI

Աշոն ու Գրիշոն դող-դողալով անցնում են բեմի կենտրոնը:

ԱՇՈ.—Գրիշո Ջան, եյի մթնեց։

ԳՐԻՇՈ.—Ո՛ւֆ (վոտքերը գետնին խփելով ու ձեռքերը շփելով) *սառնամանիք է, սառնամանիք։*

ԱՇՈ.—(Լացի ձայնով): *Զուլում է, իսկական զուլում։* (Դանդիճից լսվում է լարային, մեղմ ու բախծալի նվագածություն: Ավելի ուժեղ լսվում է ջութակի ձայնը): *Վա՛յ... վա՛յ... Հիմա էլ նվագում են։* (Մոտենում են պատուհանին):

ԳՐԻՇՈ.—Այ, եյի Շեկոն, ինչ լավ է, ինչ քաղցր է... (Պառկում): *Շեկոն մանդալին է նվագում։* (Պառկում):

ԱՇՈ.—Կարծես ծանոթ յեղանակ է։ (Պառկում):

ԳՐԻՇՈ.—Ա՛յ տղա, ասես ես սրտիս հետ են խոսում։ (Ձեռքը դնում է Աշոյի ուսին: Պառկում):

ԱՇՈ.—Ասես կանչում են մեզ։

(Հեռո գլուխները պոռուռանիին դրած ու գրկախառն մի պահ ուշադիր ու կարծես, բռնած լսում են):

ԳՐԻՇՈ.—(Սրախիվելով): *Ցերանի՜ նրանց...* (Նվագը վերջանում է: Մափսարություն):

ԱՇՈ.—*Հանդեսը վերջացավ, վերջացավ...* (Սրանք էլ այստեղ են ծափահարում):

ԳՐԻՇՈ.—*Տես, բոլոր աշակերտները մյուս դռներով են անցնում, Շեկոն էլ նրանց հետևիցն է գնում:*

ԱՇՈ.—*Կանչենք Շեկոյին:*

Տեսիլ VII

ՆՐԱՆՔ.—(Դուռն շտապում յերեվում է վարժուհին ու բարձր ձայնով հայտարարում դասյիցում գտնվողներին: Գրիշոն ու Աշոն հեռ-հեռ են քաշվում):

ՎԱՐԺՈՒՀԻ.—*Անցեք ձեր դասարանները, վերցրեք ձեր վերարկուներն ու գլխարկները և մյուս բակով տուն գնացեք:*

ԳՐԻՇՈ.—(Առաջ գալով): *Մորաքույր ջան, մորաքույր, են տղին մեզ մոտ թողեք:*

ՎԱՐԺՈՒՀԻ.—*Ո՞ւմ, Շեկոյին:*

ԱՇՈ.—*Նա մեր ընկերն է:*

ՎԱՐԺՈՒՀԻ.—(Ժպտալով): *Շեկո, Շեկո, քեզ կանչում են:*

(Աշոն ու Գրիշոն ուրախ-ուրախ ցիսում են ձեռքերը):

ՎԱՐԺՈՒՀԻ.—(Ինքն իրեն): *Ա՜... սրանք եյին, վոր աշնանը եքսկուրսիայի ժամանակ ուզում եյին մեզ խանգարել:* (Ներս է անցնում):

Տեսիլ VIII

Դուռն է վազում Շեկոն ու փաթաթվում Աշոյին ու Գրիշոյին:

ՇԵԿՈ.—*Տղերք ջան, ի՞նչպես եք:*

ԳՐԻՇՈ.—*Ես ի՞նչքան լավ բաներ եք սովորել:*

ՇԵԿՈ.—*Աշո ջան, անցյալ որը հիվանդ եյիր, լավացա՞ր...*

ԱՇՈ.—*Քո տված շաքարը քիչ ոգնեց, բայց կողքս ելի ծակում է...*

ԳՐԻՇՈ.—*Մեզ էլ քեզ մոտ տար ու ազատիր, Շեկո ջան:*

Տեսիլ IX

Դանյլինից, դուռն են վազում Վազիկը՝ մանդալինը ձեռքին, Ոնիկը, Սուրիկը, Պետոն ու Անանիտը:

ՎԱԶԻԿ:—*Շեկո ջան, դու մանդալին նվագիր մի քիչ պարենք ու գնանք:*

ՈՆԻԿ.—(Տեղում պտույտ գալով): *Հե... հե՛յ... ապա նոր հանդես...*

ՇԵԿՈ.—*Տղերք, իմ հին ընկերները յեկել են այստեղ, թողեք բիչ խոսենք:*

ՍՈՒՐԻԿ.—*Թող դրանք էլ պարեն:*

ԳՐԻՇՈ.—*Մենք էլ ենք ուզում ձեզ հետ լինել, ձեզ պես լինել:*

ԱՇՈ.—(Առաջ գալով): *Մենք էլ ենք ուզում ձեզ պես յերգել, նվագել, հագնվել, ձեզ հետ խաղալ ու սովորել:*

ԱՆԻԿ.—(Առաջ գալով։ Տղերք, չէ՞ որ վաղուցին ասաց, որ անխնամ յերեխաների համար նոր մանկատուն են բանում։

ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ.—Ճիշտ է, ճիշտ է...

(Գրիշոն ու Աշոն ուրախանում են)։

ԳՐԻՇՈ.—Աշո ջան, մեր բախտն էլ բանեց։

ՊԵՏՈ.—Հենց մեր փողոցումն է լինելու այդ մանկատունը։

ՇԵԿՈ.—Աշո ջան, Գրիշո ջան, վաղվանից յեկեք մեզ մոտ միասին խաղանք ու սովորենք։

ՎԱՉԻԿ.—Իսկ մի քանի որից հետո կգնաք այդ նոր մանկատունը։

ՈՒՆԻԿ.—Աբա մեր նոր ընկերների հետ մի լավ պարենք։

(Շեկոն մանդոլինն է նվագում, Վազիկն ու Գրիշոն պարում են, իսկ մյուսները, բեմի խորքում կիսաշրջան կազմած, ծափ են տալիս)։

ՎԱՐԱԳՈՒՑԸ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044855

3n

«ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ»-Ի ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՂԻՆԱԿԻ, ՆԵՐՔԵՎ ՀԻՇՎԱԾ, ՅԵՐԿՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԵՍՆԵՐՆ ՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ.

1. Արձակուրդի նախորյակին . . .	«Կարմիր Ծիլեր»		1924 թ.	№ 2.
2. Սեն ու սպիտակը	»	»	»	№ 3—4.
3. Զինվորացուներ	»	»	»	№ 5—6.
4. Մեր վորդոց համար բոլոր դրոնները բաց են	»	»	»	№ 9.
5. «Կատվի խաղը մկան մահը» մանկական պիես 1 գործ. . . .	»	»	»	№ 11—12.
6. Բանվորների մատ	»	»	1925 թ.	№ 6—7.
7. Մանիշն ու Ավոն	»	»	1926 թ.	№ 1.
8. Յեղդուն եկ ոգնող կա	»	»	»	№ 2.
9. Սեղանի տակից՝ մանկապարտեզ.	»	»	»	№ 3.
10. Արոն ու Մարոն	»	»	»	№ 6.
11. Շեկլիկ Շեկո, մանկ. պիես 4 գործ.	»	»	»	№№ 7 և 8.

12. Նախշուն տատիկի ակնոցները՝ լույս և տեսել «Կարմիր Ծիլեր»-ի «Իմ Գիրքը» ժողովածվի մեջ։

A III/25

Тифлис, Тифлис, пр. Руставели 31, Наркомпрос, редакция „Кармир Цилер".